

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԻՄԱԿԱՆՔ

Շր. 18 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Հոգեգալստեան մախատօնակին ի Ս. Յակոբ մախագահեց Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը:

- Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք»-ի եւ Հսկման կարգերուն մախագահեց լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր. 19 Յունիս.- Հոգեգալուստ (Բարեկենդան Եղիական Պահոց):

Առաւօտեան ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Ամղաստան», հանդիսապետն էր լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ բարոզեց Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը. սպասարկողներն էին Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան եւ Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

- Կէսօրէ ետք, լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. ի գլխաւորութեամբ, Միաբան հայրեր մեկնեցան Սիոն լեռ, մախ այցելեցին վերջին ընթրեաց վերնատունը - օրումն դէպքին պատմական վայրը - կատարուեցաւ ժամերգութիւն, հանդիսապետ Սրբազանը հակիրճ կերպով խօսեցաւ օրումն դէպքին եւ Ս. Հոգիին մերգործութեան մասին, ապա Ս. Փրկչի գաւիթին մէջ կատարուեցաւ հոգեհամզօտեան կարգ, հանգուցեալ Պատրիարքաց, լուսարարապետաց եւ միաբանից հոգիներուն ի հանգիստ:

Շր. 25 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր. ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 26 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ. հանդիսապետն էր Գեորգ. Տ. Ամուշաւան Մ. Վրդ. Ջոջանեան:

- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց մախագահեց Գեորգ. Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Բշ. 27 Յունիս.- Ս. Կուսանացն Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Եկեղեցւոյ աւանդատան Ս. Հռիփսիմէի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Ուր. 1 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ

մախագահեց Գեորգ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան:

Շր. 2 Յունիս.- Ս. Գրիգորի Լուսաւորչին (Ելն ի Վերապէն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Նախատօնակին ի Ս. Յակոբ մախագահեց լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Ապա ծմբադիր «Տէր Ողորմեա» երգուեցաւ, ըստ սովորութեան:

Կիր. 3 Յունիս.- Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Ժամերգութեան աւարտին կատարուեցաւ «Ամղաստան», հանդիսապետն էր լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Օրումն Սուրբ Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան: Լուսարարապետ Սրբազանը, մախագահեց «Հայրապետական Մաղթանք»-ի արարողութեան:

Շր. 9 Յունիս.- Ս. Մեծին Ներսիսի եւ Խադայ եպիսկոպոսին. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Կիր. 10 Յունիս.- Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գեորգ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան:

Ուր. 15 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ մախագահեց լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 16 Յունիս.- Ս. Գրիգորի Լուսաւորչին (Գիւտ Նշխարաց): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ամուշաւան Մ. Վրդ. Ջոջանեան:

Կիր. 17 Յունիս.- Երեկուան Ս. Գրիգոր Լուսաւորչի տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրէական քաժմին մէջ գտնուող եւ մեծ այդ սուրբին անունը կրող եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան որ մախ բարոզեց: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Դշ. 20 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ մախագահեց Գեորգ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիէան:

Եշ. 21 Յունիս.- Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն Ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Շր. 23 Յուլիս.- Ս. Տրդատայ թագաւորին մերոյ եւ Աշխէն տիկնոջն եւ Խոսրովիդիտոյն. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

- Նախատօնակին ի Ս. Յակոբ մախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 24 Յուլիս.- Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի. Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Սուրբ Գերեզմանին վրայ: Երթուղարծի թափօրներուն գլխաւորեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Ուր. 29 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ մախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 30 Յուլիս.- Երկուտասան առաքելոցն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերամատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Կիր. 31 Յուլիս.- Բարեկենդան Վարդավառի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերամատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշահան Մ. Վրդ. Զոյնանեան:

Ուր. 5 Օգոստ.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 6 Օգոստ.- Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

- Մայր Տաճարին մէջ պաշտուած Այլապերպութեան մեծահանդէս նախատօնակին եւ Տեառնեղբօր գահակալութեան հանդէսին նախագահեց Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը:

Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք»ի եւ Հսկման կարգերուն հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 7 Օգոստ.- Վարդավառ (Տօն Այլակերպութեան Տեառն): Ժամերգութեան Աւարտին կատարուեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը:

Սպասարկողներն էին Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան եւ Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Բշ. 8 Օգոստ.- Յիշատակ Մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատարան մէջ պատարագեց

Հոգ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Ապա կատարուեցաւ Հանգստեան կարգ մնչեցեալներու հոգիներուն համար, եւ երանաշնորհ Տ. Կիրեղ Պատրիարք Հօր շիրիմին վրայ. հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբիկեան:

Ուր. 12 Օգոստ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ մախագահեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 13 Օգոստ.- Թաղէտի Առաքելոյն եւ Սանդիտոյ Կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Իփրանեան:

Կիր. 14 Օգոստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերամատարան մէջ: հանդիսապետն էր լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան. Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Հանդիսապետ Սրբազանը նախագահեց «Խաղողորհմէ՛ք»ի արարողութեան:

Բշ. 15 Օգոստ.- Այսօր սկսաւ Ս. Կոյսի վերափոխման տօնը կանխող հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը՝ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

Շր. 20 Օգոստ.- Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Կիր. 21 Օգոստ.- Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Ուր. 26 Օգոստ.- Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր լուսարարապետ Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 27 Օգոստ.- Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին. Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

- Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր իմեմաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ: - Գիշերասկիզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեցե՛ք»ի եւ Հսկման կարգեր, եւ ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան:

Կիր. 28 Օգոստ.- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Յուսիկ Եպս.

Պաղտասեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազանը եւ նախագահեց «Անդաստանին»:

– Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած նախատօնակին նախագահեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 29 Օգոստոս.– Յիշատակ Մեռելոց: Օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատոյց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան նաեւ քարոզեց հայրերն եւ անգլիներն: Ամենայն Հայոց հանգուցեալ Հայրապետին, Ն. Ս. Օ. Տ. Ս. Վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանումին առիթով հրաւիրուած էին Նորուսաղէի կրօնական համայնքներու պետերը եւ պետական ներկայացուցիչները: Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի, Օգոստոս 18ին Աթենքի ճամբով մեկնած էր դէպի Ս. Էմիւածին: Բարիզի ճամբով, Օգոստոս 21ին նոյնպէս մեկնած էին Գերշ. Մարի Կիրեղ, Վահան եւ Սեւան Եպիսկոպոսները մասնակցելու համար քաղման արարողութեանց եւ կաթողիկոսական Տեղապահի ընտրութեան, որուն հրաւիրուած էին Մայր Աթոռ Ս. Էմիւածին Եպիսկոպոսները:

Շր. 3 Սեպտ.– Է. օր վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 4 Սեպտ.– Ը. օր վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան երաշխաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան: Պատարագեց, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Գերշ. Տ. Վաղարշ Նպս. Խաչատուրեան:

Բշ. 5 Սեպտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Գշ. 6 Սեպտ.– Ս. Յովակիմայ եւ Ամնայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովակիմ գերեզմանին վրայ: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջոզանեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Գշ. 7 Սեպտ.– Ս. Գլխադիր մատրան մէջ իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Տ. Դանիէլ Քինյ. Գարաբեան:

Եշ. 8 Սեպտ.– Ս. Գլխադիր մատրան մէջ իր

անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Տ. Եղրաս Քինյ. Պոկտան:

Ուր. 9 Սեպտ.– Ս. Գլխադիր մատրան մէջ իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Տ. Զաքարիա Քինյ. Սարիբէկեան:

Շր. 10 Սեպտ.– Թովմայի առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր. Ժամարարն էր նորընծայ քահանայից ռուսացի Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր. 11 Սեպտ.– Գիւտ Գօտոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Լուսարարապետ Սրբազանը նաեւ քարոզեց: Ժամարարն էր Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան: Կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, Եշ. 8 Սեպտ.ին Տաճարի Ընդհանուր մահրութեան մասնակցողներու հանգուցեալ հարազատներուն, որոնց երկար ցամկը կարողաց Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան: Յետոյ հոգեհուրճ տրուեցաւ պարտէզը:

Շր. 17 Սեպտ.– Նիկիոյ Ս. Ժողովոյն (325): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 18 Սեպտ.– Բարեկենդան Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ. հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտասեան. Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Գշ. 20 Սեպտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտասեան:

Գշ. 21 Սեպտ.– Մնունդ Ս. Աստուածածնի ի յԱմնայէ: Առաւօտուն, Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտասեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար ուր Տիրամօր Սուրբ Գերեզմանի վրայ օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեց: Գերշ. հանդիսապետ Սրբազանը:

– Յաւարտ երեկոյեան ժամերգութեան Գոհաբանական Մաղթանք վասն Հայաստանի Հանրապետութեան Գ. տարեդարձի:

Շր. 24 Սեպտեմբր.– Տօն եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրապեան:

– Խաչվերացի մեծահանդէս նախատօնին ի Ս. Յակոբ նախագահեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, որ ապա կննաց Փայտի մատունը փոխադրեց Աւագ Սեղանին:

- Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան նախագահեց նաեւ գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Նկեսցէ»ի եւ հսկման կարգերուն:

Կիր. 25 Սեպտ.- Տօն վերացման Ա. Խաչին (629): Օրում հանդիսաւոր Ա. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Գերշ. Տ. Կիրեղ Նպս. Գարիկեան նախագահեց Ամենայն Հայոց Վազգէն Ա. Հայրապետին եւ Մեղգոնեան քարեքար եղբարց հոգիներուն համար կատարուած հոգեհամգստեան պաշտամունքին: Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուած խաչվերացի «Մեծ Անդաստանին» նախագահեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 26 Սեպտ.- Յիշատակ Մեռելոց: Մայր Տաճարի Ա. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Հոգեհամգստեան կարգին հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան:

Շր. 1 Հոկտ.- Տօն Խաչի: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Արծանապատիւ Տէր Դանիէլ Բահանայ Գարանեան:

Կիր. 2 Հոկտ.- Բարեկենդան Վարագայ Ա. Խաչին պահոց: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան: Ժամարարն էր Արծանապատիւ Տէր Զաքարիա Բահանայ Սարիքեկեան:

Ուր. 7 Հոկտ.- Նախատօնակը պաշտուեցաւ Դպտոց Սուրբ Գեորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան:

Շր. 8 Հոկտ.- Ա. Գեորգայ գորավարին: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գեորգ (Դպտոց). ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զոհանեան: Նրա ու դարձի քափօրներուն նախագահեց Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան: Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Դպտոց Հոգշ. վանահայրէն:

- Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Սեւան եպիսկոպոսի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ա. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամատրան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր քափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զոհանեան:

Կիր. 9 Հոկտ.- Տօն Վարագայ Ա. Խաչին: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները

պաշտուեցան ի Ա. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան: Հանդիսապետ Սրբազանը մատոյց օրում հանդիսաւոր Ա. Պատարագը Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ եւ քարոզեց:

Շր. 15 Հոկտ.- Սրբոց Նօթանասուն եւ Նրկու Աշակերտացն Քրիստոսի: Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւիթը, Ա. Գեորգայ սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 16 Հոկտ.- Այսօր կատարուեցաւ Թամիլի Ա. Գեորգայ Վանուց տարեկան ուխտագնացութիւնը, ներկայութեամբ քաղաքի ժողովուրդի եւ նախագահութեամբ լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի որ եւ քարոզեց: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

ՊԵՏՏՕՆԱԿԱՆՔ

Դշ. 15 Յունիս.- Ֆիլիպ Մարտրն, Անգլիացի երիտասարդ մը, շրջապատյոյ կատարելով Միջին Արեւելի երկիրներէն ումանք, ընդ որս նաեւ Հայաստան եւ Նորսահմէ, Յունիս 15, Զորեշարքի երեկոյ, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ ներկայացուց Հայոց մասին հրատարակած իր նոր հատորը:

Բշ. 20 Յունիս.- Հոգեգալստեան Տօնին առիթով Ռուսաց եկեղեցւոյ մէջ պատարագեց Յունաց Սրբազան Պատրիարքը, ուր մասնակցեցան Գեր. Տ. Սեւան Նպս. Դարիպեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Բշ. 4 Յուլիս.- Ամերիկեան Անկախութեան 218 ամեակի առիթի ներկայ գտնուեցան լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան:

Նշ. 14 Յուլիս.- Կազայի մէջ Խորայեկեան-Պաղեստինեան խաղաղութեան դաշինքի առիթով յանուն Պատրիարքարանի շնորհաւորելու ներկայ գտնուեցաւ լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

- Նոյն օրը փրանսական Ազգային Տօնին առիթի ներկայ գտնուեցան լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Գերշ. Տ. Սեւան Նպս. Դարիպեան:

Ուր. 5 Օգոստ.- Մեսէշուսէց նահանգի Պոսթոն Բաղաֆի Բաղաֆապետ Թովմաս Մէնին եւ խորհրդակցանք, այցելեցին Հայոց Վանք, տեսակցեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ եւ միասին Միաբանութեան կէսօրում նաշին սեղանակից եղան:

Գշ. 9 Օգոստոս.- Պատրիարք Արքազան Հայրը պաշտօնական այցելություն մը տուաւ Պաշտօնականին միջոցով Մարտիկոս Գազայի իր պաշտօնատեղւոյն մէջ, ընկերակցութեամբ Գեր. Ս. Սեւան Եպս. Դարիպեանի, Գեր. Ս. Յուսիկ Եպս. Պաշտօնականին, Ս. Անուշաւան Ծ. Վրդ. Զոհանեանի, Ս. Բարսեղ Վրդ. Գալէտէրեանի, եւ Ս. Ռազմիկ Վրդ. Պաշտօնականին, եւ յայտնեց Միաբանութեան եւ հայ համայնքին բարի մարդանկնը Իսրայէլի եւ Պաշտօնականին ղեկավարներուն միջոցով խաղաղութեան եւ հաշտութեան ջանքերուն արդիւնաւորման համար:

Բշ. 15 Օգոստոս.- Երուանդ Թէրզեան, Գորնէ Համալսարանի Աստղաբանութեան բաժանմունքին Ընդհանուր Տնօրէնը, Օգոստոս 7-11 մասնակցելէ յետոյ Հայֆայի մէջ գումարուած աստղագիտական համագումարին, Երուսաղէմ այցելեց Օգոստոս 12-16 օրերուն: Եղաւ Պատրիարքարանիս հիւրը, այցելեց սրբավայրեր, տեսաւ հայկական թանկագին ժառանգութիւնը Երուսաղէմի մէջ: Օգոստոս 15ի երեկոյին դասախօսեց ժառանգաւորաց վարժարանի սրահին մէջ:

Շր. 30 Յուլիս եւ Եշ. 11 Օգոստոս.- Յետ միջօրէին Պատրիարք Արքազան Հայրը այցելեց Լաթրուսի Թրափիստներու վանքի անտառակին մէջ մէկական շաքարով բանակումի գացած Հ.Ե. Միութեան եւ Հ.Մ.Ը.Միութեան սկստուններուն, անոնց հետ ընթերցելով եւ բանակումին օգտակարութիւնը եւ կարեւորութիւնը շեշտելով պատանիներուն նկարագիրը կերտելու տեսակետէն:

Եշ. 25 Օգոստոս.- Լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք. Սահակեան ներկայ եղաւ պաշտամունքային արարողութեան մը, հովանաւորութեամբ Լաթրուս Ուրլտ Ֆետրէշընի եւ լուսարարական անտարանչական եկեղեցւոյ: Իսկ 28 Օգոստոսին, Էմպէսատոր պանդոկին մէջ տրուած հիւրասիրութեան:

Եշ. 25 Օգոստոս.- Յունաց Ամեն. Ս. Տիոտորոս Պատրիարքի հրաւերով, լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք. Սահակեան եւ Հոգշ. Ս. Աւետիս Արք. Իփրանեան, ներկայ եղան Սերպիոյ Ամեն. Ս. Պօղոս Պատրիարքի դիմաւորութեան, Յուլիէի դուռէն մինչեւ Ս. Յարութեան Տաճար, եւ ապա Յունաց Պատրիարքարանի մէջ:

Կիր. 28 Օգոստոս.- Լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք. Սահակեան. Յունաց Ամեն. Տիոտորոս Պատրիարքի հրաւերով մասնակցեցաւ ի պատիւ Սերպիոյ Ամեն. Ս. Պօղոս Պատրիարքին տրուած ընդունելութեան:

Բշ. 29 Օգոստոս.- Նորին Ս. Օծութիւն Ս. Ս. Վագգէն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի

վախճանման առթիւ, Վերափոխման Մեծիօրը, Մայր Տաճարի Աւագ խորանի վրայ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ եւ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, ներկայութեամբ քաղաքի մէջ գտնուող կրօնական համայնքներու ներկայացուցիչներու, կրօնական մատարարութեան, ոստիկանութեան եւ հիւպատոսներու, ողջ միաբանութեան եւ ժողովուրդի, միաբանութեամբ լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք. Սահակեանի, որ պատարագեց եւ քաղաքեց հայերէն եւ անգլերէն լեզուներով:

- Նոյն օրը Սերպիոյ Ամեն. Պօղոս Պատրիարքի անունով Պատրիարքարան այցելեցին երկու Արքեպիսկոպոսներ եւ ընդունուեցան լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք. Սահակեանի եւ միաբանութեան անդամներուն կողմէ ժամը 11.30ին:

Ուր. 16 Սեպտ.- Հեպրոնի մէջ կազմակերպուած ճաշկերոյթի մը, ի պատիւ աֆոնէ վերադարձող մահմետական անձնաւորութիւններու, ի շարքս քրիստոնէական այլ համայնքներու ներկայացուցիչներուն, ներկայ գտնուեցաւ լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք. Սահակեան:

Եշ. 22 Սեպտ.- Երուսաղէմի Քաղաքապետ Տիար Օլմերքի հրաւերով, Տաղաւարահարաց Տօնին առթիւ, ընդունելութեան մասնակցեցան լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք., Գերշ. Ս. Սեւան Եպս. եւ Հոգշ. Ս. Բագրատ Արքեպիսկոպոսի պատմութեան թանգարանին մէջ:

Բշ. 26 Սեպտ.- Energy Պաշտօնական ելեւթարակներուն ուժի կեդրոնի բացման առթիւ ներկայ գտնուեցաւ լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 8 Հոկտ.- Կաթողիկէ Օժանդակութեան Քարիթաս Ֆրանսա կազմակերպութեան միաբան Պր. Փիեռ Պուակոնի հրաւերով, Երուսաղէմի Ռաս Էլ Ամուտի «Արքապատի Տունին» մէջ մատուցուած Պատարագին ներկայ գտնուեցաւ լուսարարապետ Գերշ. Ս. Դաւիթ Արք. Սահակեան: Կը միաբանեալ Գարսիմալ Էլէկարէ, ի ներկայութեան Ֆրանսական Ընդհանուր Հիւպատոս Ժան տը Կլիմիասիի, որ ի պատիւ հիւրներուն նոյն երեկոյեան հիւրասիրութիւն մը կազմակերպուած էր:

Կիր. 9 Հոկտ.- Հոգշ. Ս. Անուշաւան Ծ. Վրդ. Զոհանեան ներկայ գտնուեցաւ միաբանին ապարանք, Congoի միաբանի ժամանման առթիւ տրուած ընդունելութեան:

Գշ. 12 Հոկտ.- Երուսաղէմի Միփթի Սուլէյման Զապարիի թաղման արարողութեան ներկայ գտնուեցաւ Հոգշ. Ս. Անուշաւան Ծ. Վրդ. Զոհանեան:

– Նոյն օրը Սպանական Ազգային Տօնին առիթով հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Հոգշ. Տ. Գրուսան Վրդ. Ալնանեան:

Բշ. 17 Հոկտ.– Տարիներով Վատիկանի Եկեղեցիներու Միութեան քաժամմունքի նախագահ Գարտինալ Ուիլիյամսոս, այժմ հանգստեան կոչուած, այցելեց Ս. Յակոբայ Մայր Տաճար, երեկոյեան ժամերգութեան մասնակցելով, եւ մեր Միաբանութեան հոգեւոր հայրերու ընկերակցութեամբ, Պատրիարքարանի Դահլիճին մէջ ընդունուեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր կողմէ: Էփումէնիք ձեռնարկներու մէջ գործակիցներ, անդրադարձան Նիւ Եօրքի, Էջմիածնի եւ Հռոմի մէջ կազմակերպուած հանդիպումներու, յիշելով հանգուցեալ Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսի պատմական այցելութիւնը Վատիկան, 1970 Մայիսին, Պօղոս Զ. Պապի հիւրընկալութեամբ: Ութսունամեայ Գարտինալը ուխտի եւ աղօթքի

համար եկած է Սուրբ Երկիր, իր քահանայական ձեռնադրութեան 60 ամեակին առիթով, իր մէկ օծակից դասընկերոջ հետ:

Գշ. 18 Հոկտ.– Գերմանիայէն եւ Միջին Արեւելքի տարբեր երկիրներէն Լուտերական հոգեւորականներ եւ աստուածաբաններ, Երուսաղէմի մէջ իրենց կազմակերպած հաւաքոյթին առիթով, Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցան, խօսակցելով կրօնական, ընկերային, հովուական հասարակաց հարցերու մասին:

Գշ. 19 Հոկտ.– Երեկոյին Պատրիարքարանի Դահլիճին մէջ Միաբանութեան հոգեւոր հայրերը հաւաքուեցան պտղասեղանի շուրջ, ուր Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը տեղեկութիւններ տուաւ հանգուցեալ Վեհափառ Հայրապետի յուղարկւորութեան կանոնաւորութեան եւ պետական հովանաւորութեան, կաթողիկոսական Տեղապահի ընտրութեան, եւ յառաջիկային գումարուելիք Ազգային եկեղեցական ժողովին հետ կապուած հարցերու մասին: